

Ինստիտուտների գեներալի տեսությունը սակայն թույլ չի տալիս իր սկզբունքները տարածելու համակարգում առկա ինստիտուտների ամբողջության վրա: Գաղտնիք չէ, որ յուրաքանչյուր առանձին վերցրած տնտեսական համակարգում միաժամանակ գործում են էվոլյուցիոնացված, գոյատևված, նոր ձևավորվող և ներդրված (արհեստական, մշակված) ինստիտուտներ: Ինստիտուտների էվոլյուցիոն զարգացման պրոցեսը տեղի է ունենում հենց այդ ամբողջության մեջ, և դրանով գործընթացն ավելի բարդ ու երկարաժամկետ բնույթ է կրում, քան համասեռ էվոլյուցիոնացվող ինստիտուտների ամբողջության դեպքում:

ԱՐԱՄ ՄՈՒՐԱԴՅԱՆ

*ՀՀ ԳԱՄ Մ. Զոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ*

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Կենտրոնացված կառավարման մոդելից ազատական հարաբերություններին կտրուկ անցման արդյունքում ինչպես նախկին սոցիալիստական ճամբարի բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանում ծագեցին բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնցից, թերևս, կարևորագույնն ազգային անվտանգության ապահովումն էր: Ակնհայտ է, որ լինելով հզոր երկրի փոքր մասը, Հայաստանն, ըստ էության, չէր կրում մեծ ծանրաբեռնվածություն այդ երկրի անվտանգության ապահովման գործում: Նոր պայմաններում, անշուշտ, երկրի համար գերակա խնդիրներից մեկը պետք է դառնար ազգային անվտանգության համակարգի ստեղծումը:

Ազատ շուկայական հարաբերությունների ձևավորման և իրավական, սոցիալական, ժողովրդավարական պետության կերտման ձգտումն ինքնին նշանակում է քաղաքական, սոցիալական և տնտեսական համակարգերի արմատական վերափոխումների իրականացում, այդ թվում՝ տնտեսական և քաղաքական ազատությունների երաշխավորում, սեփականության բազմաձևության ներդրում, միջազգային հանրությանը և համաշխարհային տնտեսությանը ներդաշնակ ինտեգրման բազմաշերտ հիմնախնդրի լուծում և այլն:

Ազատական արժեքային համակարգի ներդրումը պետք է ենթադրի դրա հիմքում դրվող սկզբունքների ձևավորում, նպատակամիտությունն ապահովող փոխկապակցված ու փոխապայմանավորված ենթահամակարգերի ստեղծում, գործունեության արդյունավետ մեխանիզմների մշակում և այլն: Այդպիսի համակարգի ներդրումն, անշուշտ, պահանջում է որոշակի ժամանակահատված, որի տևողությունն, ի թիվս այլ խնդիրների, զգալիորեն պայմանավորված է անցումային փուլում տվյալ պետության համար չափազանց կարևոր սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների ամկայությամբ և արժեքային համակարգի նկատմամբ դեռևս նախկինում ձևավորված, ձևախեղված բարոյահոգեբանական մթնոլորտով: Այս առումով, անշուշտ, բացառություն չէր կարող լինել Հայաստանի Հանրապետությունը, որտեղ անկախ պետականության կայացմանը հաջորդած տարիներին ազգային անվտանգության ապահովման ուղղությամբ արձանագրվեցին շոշափելի ձեռքբերումներ: Մասնավորապես, հարկ է նշել ինչպես բազմաթիվ երկրների հետ դիվանագիտական հարաբերությունները հաստատումն ու զարգացումը, արցախյան հակամարտության արդյունքում առավել նպաստավոր պահին զինադադարի կնքումը, սոցիալական բարդ խնդիրների լուծումը, այնպես էլ «առաջին սերնդի» տնտեսական (հողի, ինչպես նաև առևտրի, ծառայությունների ոլորտի և արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհում, ազգային դրամի ներդրում, բանկային համակարգի ձևավորում, էներ-

գետիկ համակարգի բարեփոխում, ֆինանսական շուկայի վերափոխումներ) և ինստիտուցիոնալ (տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորում, պետական կառավարման համակարգի կառուցվածքի և գործառնությունների կատարելագործում, դատական համակարգի բարեփոխում, քաղաքացիական ծառայության համակարգի ներդրում) բարեփոխումները:

Համաշխարհային զարգացման ներկա միտումները ստիպում են վերանայել պետության ազգային անվտանգության ապահովման գործում ռազմական գործոնների գերակայության ընկալումը և ազգային անվտանգությունը դիտարկել որպես անհատի, հասարակության, պետության շահերի պաշտպանության միասնական համակարգ: Ինչ վերաբերում է նշված համակարգի նկատմամբ արտաքին ներգործությանը, ապա աշխարհում իրադարձությունների սրընթաց զարգացումը պահանջում է արագ և համարժեք արձագանք արդի մարտահրավերների ու սպառնալիքներին, քանի որ այդ արձագանքից կախված՝ ծավալվող գործընթացները կարող են խիստ բացասական ազդեցություն ունենալ համակարգի վրա: Ավելին, երկրի բնականոն զարգացման հեռանկարները կարող են էապես սահմանափակվել և ծառայեցվել այլ պետությունների շահերին:

Հարկ է նշել, որ փոքր պետությունների համար խոշոր երկրների շահերի բախման կիզակետում կամ դրանցից մեկի ճնշման ներքո հայտնվելու հավանականությունը չափազանց մեծ է: Այդպիսի իրավիճակներում փոքր երկիրը գործնականում չի տիրապետում իրադարձությունների վրա էական ազդեցության գործուն լծակների, հետևաբար նա ձգտում է մասնակցել համագործակցության այնպիսի ձևաչափերին, որոնք առավելագույնս նպաստում են անկախության և անվտանգության պահպանմանն ու ամրապնդմանը: Մասնավորապես դժվար չէ նկատել, որ ներկայումս Հարավկովկասյան տարածաշրջանը մեծ հետաքրքրություն է ներկայացնում խոշոր պետությունների և միջազգային կազմակերպությունների համար, և տարածաշրջանի երկրներից յուրաքանչյուրն, ըստ էության, կանգնած է այդ խնդրի լուծման անհրաժեշտության առջև: Հատկապես վերջին տարիներին, Հարավկովկասյան երկրների կողմից եվրաինտեգրման ռազմավարության իրականացմանը գուզընթաց, տարածաշրջանում սրվել է մրցակցությունը շահագրգիռ ուժերի և անվտանգության համակարգերի միջև:

Միջազգային համագործակցության դաշտն ընդգրկում է հակաահաբեկչական, բնապահպանական, սպառազինությունների վերահսկման և համընդհանուր նշանակության այլ ծրագրեր: Երբեմն միմյանց հետ չլուծված խնդիրներ ունեցող երկրները բազմակողմ ձևաչափերում միասնական ջանքեր են գործադրում նշված հիմնախնդիրների լուծման ուղղությամբ: Որպես օրինակ, նշենք Հայաստանի և Ադրբեջանի ակտիվ մասնակցությունը վերջին տարիներին ծավալված հակաահաբեկչական պայքարին, զանգվածային ոչնչացման զենքի տարածման կանխարգելմանն ուղղված միջոցառումներին, խաղաղարար առաքելություններին և միջազգային համագործակցության այլ դրսևորումներին:

Տարածաշրջանային հակամարտությունների կարգավորումը և անվտանգության գործուն համակարգի ձևավորումը պետք է խաբսխվեն երկրների երկարաժամկետ շահերի ներդաշնակեցման վրա, որի խաթարումը ձեռնադրում չի կարող լինել երկրներից որևէ մեկի համար: Միևնույն ժամանակ ներդաշնակեցումը կարող է իրականություն դառնալ միայն այդ երկրների տնտեսական շահերի փոխկապակցվածության և փոխապայմանավորվածության դեպքում, ինչն էլ, ըստ էության, պետք է նպաստի այդ համակարգի արդյունավետության բարձրացմանը և դրա ենթահամակարգերի բնականոն գործունեության ապահովման հնարավորությունների ընդլայնմանը: Տարածաշրջանի կայունությունը ենթադրում է այն ներկայացնող երկրներից յուրաքանչյուրի աշխարհաքաղաքական ներուժի իրացում, անվտանգ և դինամիկ զարգացման հնարավորությունների, ինչպես նաև տարածաշրջանում այնպիսի դերակատարության երաշխավորում, որը չի սահմանափակում այդ երկրներից երևէ մեկի մասնակցությունը տարածաշրջանային հիմնախնդիրների լուծմանը:

Յուրաքանչյուր երկրում հասարակական կենսագործունեության բոլոր ոլորտներում առաջընթացի ապահովման և առկա հիմնախնդիրների լուծման գրավական կարող է դառնալ տնտեսական զարգացման այնպիսի ռազմավարության որդեգրումը, որը համահունչ է համաշխարհային գործընթացների տրամաբանությանը, ինչպես նաև անմիջական հարևան երկրների հետ արդյունավետ փոխհարաբերությունների ծավալմանը: Տարածաշրջանային և այլ միջազգային համագործակցության շրջանակներում Հայաստանը պետք է ձգտի այնպիսի մասնակցության, որը բավարար է ազգային կենսական շահերի պաշտպանության համար:

Երկարաժամկետ կայունության, տարածաշրջանի յուրաքանչյուր երկրի անվտանգության և խաղաղ զարգացման ապահովման, զինված հակամարտությունների բացառման երաշխիք են տարածաշրջանային համագործակցության կայացումն ու խորացումը: Այս առումով Հայաստանի համար վճռորոշ նշանակություն ունի տրանսպորտային շրջափակման հաղթահարումը, հարավկովկասյան տրանսպորտային և էներգետիկ ենթակառուցվածքներում արդյունավետ մասնակցության ապահովումը, տարանցիկ երկիր դառնալու հնարավորությունների իրացումը և այլն:

Անցումային շրջանում ծառացած հիմնախնդիրների լուծման արդյունավետության բարձրացման նպատակով վերջին տարիներին մշակվել և ընդունվել են մի շարք փաստաթղթեր, այդ թվում՝ «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր»-ը (2003), «Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիր»-ը (2003), տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման ծրագրեր, ինչպես նաև «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն»-ը (2007): Վերջինս ազգային անվտանգության ամբողջ ոլորտն ընդգրկող, համապարփակ, համալիր և ռազմավարական փաստաթուղթ է, ազգային անվտանգության ապահովման հիմնական ուղղությունների, մարտահրավերների ու առաջնահերթությունների պաշտոնական ուղեցույց:

ՀՀ ազգային անվտանգության համակարգի նպատակներն են մարդու իրավունքների և օրենքի գերակայության երաշխավորումը, պետության ռազմաքաղաքական և տնտեսական շահերի համակողմանի պաշտպանությունը, բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացումը, արտակարգ իրավիճակներից մարդու կյանքի, առողջության և ունեցվածքի պաշտպանություն՝ աղետների ռիսկերի նվազեցման և երկրում ռիսկերի կանխարգելման մշակույթի լայնածավալ ներդրման միջոցով, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում և պատերազմական պայմաններում պետության տնտեսական և քաղաքական համակարգերի խոցելիության նվազեցումն ու բնականոն գործունեության ապահովումը: Ազգային անվտանգության հիմնական երաշխիքը և պաշտպանության հիմքը ակնհայտորեն երկրի զինված ուժերն են, ազգային անվտանգության և ներքին գործերի կառույցները, արտաքին սպառնալիքների կանխարգելման և հակազդման միջոցների համակարգը¹:

ՀՀ ռազմական անվտանգության գրավականը մարտունակ զինված ուժերի առկայությունն է: Այդ առումով կարևորվում է զինված ուժերի շարունակական բարեփոխման և արդիականացման (ելնելով միջազգային ասպարեզում ծավալվող գործընթացներից և ընդունված չափանիշներից), դրանց նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ապահովումը:

Ներկայումս հասունացել է «երկրորդ սերնդի» բարեփոխումների (կենսաթոշակային ապահովության, կրթության, գիտության, առողջապահության համակարգեր) իրականացման հրամայականը, որը պահանջում է բավարար քաղաքական կամքի առկայություն, զարգացած երկրների փորձի կիրառում: Ակնհայտ է, որ ապահովագրական համակարգի ներդրումն ու զարգացումը կարող են դառնալ առողջապահության և կենսաթոշակային ապահովության համակարգերի արմատական բարեփոխման անկյունաքարը՝ նպաստելով սոցիալական բարիքների համընդհանուր մատչելիության ապահովմանը:

¹ «Ազգային անվտանգության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքի նախագիծ, «Առավոտ» օրաթերթ, 04.02.2006:

Ինչպես հայտնի է, անցումային շրջանում զգալիորեն կրճատվեցին սոցիալական ոլորտի պետական հատկացումները, իրական կենսաթոշակները, տնային տնտեսությունների սպառումը, արժեզրկվեցին քաղաքացիների խնայողությունները, բնակչության զգալի մասը հայտնվեց ծայրահեղ աղքատության մեջ: Ներկայումս առաջնահերթ լուծում են պահանջում պետական աջակցության կարիք ունեցող խավերի նվազագույն կենսական պահանջմունքների բավարարման, աշխատաշուկայում առաջարկի և պահանջարկի հավասարակշռության ապահովման, աշխատուժի մրցունակության բարձրացման, գյուղական բնակավայրերի սոցիալական զարգացման հիմնախնդիրները: Սոցիալական համերաշխության խաթարումը խոչընդոտում է քաղաքացիների ստեղծագործական շարժառիթների դրսևորմանը, հանգեցնում մարդկային կապիտալի որակի անկման, բնակչության ժողովրդագրական պատկերի վատթարացման, արտագաղթի ուժգնացման՝ այդպիսով դառնալով ազգային անվտանգության սպառնալիք:

Զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ առողջապահության համակարգի ֆինանսավորման արմատական բարեփոխման հիմքում պետք է ընկած լինեն պարտադիր բժշկական ապահովագրության համակարգի ներդրումն ու զարգացումը: Վերջինիս արդյունքում համակարգի ֆինանսավորման մյուս աղբյուրները կվերագտնեն իրենց գործնական նշանակությունը, մասնավորապես առավել պարզորոշ կուրվագծվեն կամավոր բժշկական ապահովագրության համակարգի շրջանակներն ու զարգացման հեռանկարները, կվերանայվի բյուջետային հատկացումների նպատակային ուղղվածությունը, դրանց չափերը կհամապատասխանեցվեն պետության իրական ֆինանսական հնարավորություններին, իսկ արդյունքում կբարձրանա բուժօգնության համընդհանուր մատչելիության մակարդակը:

Կենսաթոշակային ապահովության համակարգի արմատական բարեփոխման արդյունքում հնարավորություն կընձեռվի ձևավորել անհատական կենսաթոշակային ապահովագրության համակարգ, հասնել կենսաթոշակների աստիճանական բարձրացման, կենսաապահովման նվազագույն զամբյուղից ոչ ցածր կենսաթոշակ ստանալու՝ քաղաքացիների իրավունքի ապահովման: Բարեփոխման հիմքում պետք է ընկած լինեն կենսաթոշակների ձևավորման ապահովագրական, կուտակային և սոցիալական բաղադրիչների համատեղումը, եռամակարդակ կենսաթոշակային համակարգի (պարտադիր սոցիալական ապահովագրություն, սոցիալական և կամավոր կենսաթոշակներ) ձևավորումը: Ապահովագրական սկզբունքների կիրառումը կապահովվի կենսաթոշակի չափի ամփոփական կախվածությունը նախկին աշխատավարձից և սոցիալական վճարումներից: Պետությունը պետք է նպաստի ոչ պետական կենսաթոշակային հիմնադրամների ձևավորմանը և զարգացմանը, քաղաքացիներին կենսաթոշակային ապահովության տարբեր սխեմաների ընտրության հնարավորությունների ընձեռմանը:

Ներկայումս անվտանգության ինչպես միջազգային, այնպես էլ ազգային մակարդակներում էապես մեծանում է նրա տնտեսական և հոգևոր ոլորտների նշանակությունը: Արդի աշխարհում սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական գործոն է համարվում մարդկային ներուժը, հետևաբար հոգևոր ոլորտը (կրթություն, գիտություն, մշակույթ, տեղեկատվություն, բնության և շրջակա միջավայրի պահպանություն) հարկ է դիտարկել պետական քաղաքականության գերակայությունների շարքում:

Տնտեսության և մյուս բնագավառների զարգացման հեռանկարները մեծապես պայմանավորված են կրթության համակարգի կարողությամբ՝ առավելագույնս բավարարելու հասարակության կրթական պահանջմունքները: ՀՀ ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից կրթական համակարգի բարեփոխման պետական ռազմավարությունը պետք է նպատակաուղղվի կրթության որակի բարձրացմանը և համապատասխանեցմանը ժամանակակից եվրոպական չափանիշներին: Ազատական արժեքների վրա հիմնված արդիական կրթական համակարգի ձևավորումը նշանակում է օտարերկրյա կրթական հաստատությունների հետ բազմակողմ համագործակցության ընդլայնում, մասնավոր կրթական հաստատությունների գործունեության

բարենպաստ պայմանների ապահովում, կրթության կառավարման գործընթացին հասարակության մասնակցության և կրթական հաստատությունների ինքնավարության երաշխավորում, համակարգում մրցակցային սկզբունքների և ճկուն մեխանիզմների ներդրում և կիրառում:

Ներկայումս երկրի զարգացման գրավական է համարվում գիտելիքի վրա հիմնված տնտեսության ձևավորումը, ինչը պայմանավորում է գիտության արմատական բարեփոխումների իրականացման հրամայականը: Վերջինս, նախ և առաջ, ենթադրում է ոլորտի ֆինանսավորման սկզբունքների համապատասխանեցում շուկայական տնտեսության պահանջներին: Գիտության զարգացման գերակա ուղղությունների և դրանց պետական ֆինանսավորման ծավալների սահմանումը պետք է անմիջականորեն պայմանավորված լինի պետության զարգացման ռազմավարական ուղենիշներով: Պետական քաղաքականությունը պետք է նպաստի նորարարական գործունեության խրախուսմանը, գիտության տեխնիկական և տեխնոլոգիական հագեցվածության մակարդակի բարձրացմանը, ենթակառուցվածքների արդիականացմանը, գիտության տարբեր ճյուղերի գծով զարգացման միջազգային ծրագրերի իրականացմանը, միջազգային գիտական կենտրոնների հետ համագործակցության ընդլայնմանը, գիտական ծրագրերի և կատարված աշխատանքների արդյունքների գնահատման արդի եղանակների ներդրմանը:

Ազատական տնտեսավարման պայմաններում մշակույթի զարգացման պետական ռազմավարությունը ենթադրում է մշակութային գործունեության բոլոր ոլորտներում ազատ մրցակցության խրախուսում, ստեղծագործ աշխատանքի, անհատի ընդունակությունների առավելագույն դրսևորման խթանում, գրաքննության և շահագրգիռ միջամտության այլ դրսևորումների բացառում: Պետության գործառնությունների դաշտում պետք է գտնվի պատմամշակութային ժառանգության նկատմամբ անհրաժեշտ հոգածության ապահովումը, արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի զարգացումը, ոլորտում արդի տեխնոլոգիաների կիրառումը, հայոց լեզվի՝ որպես ազգային ինքնության պահպանման կարևորագույն գործոնի բացառիկ դերի կարևորումը: Ազգային փոքրամասնությունների լեզվական, կրթական, կրոնական, մշակութային իրավունքները պետք է գտնեն անհրաժեշտ պաշտպանություն: Անհատի ներդաշնակ հոգևոր զարգացման առումով հարկ է կարևորել զանգվածային լրատվամիջոցներով բռնություն, ազգամիջյան և միջկրոնական թշնամանք, կրոնական ծայրահեղականություն սերմանող քարոզչության արգելումը:

Հանրային կառավարման և դատաիրավական համակարգերը, չնայած մինչ օրս ձեռնարկված քայլերին, ունեն շարունակական բարեփոխման կարիք: Առաջիկայում ձեռնարկվելիք միջոցառումները պետք է միտված լինեն պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի արդիականացմանը և կատարելագործմանը, դրանց գործունեության արդյունավետության, թափանցիկության, հասարակության առջև հաշվետվականության և հասարակական վերահսկողության մեխանիզմների ձևավորմանը, ինչպես նաև որոշումների կայացման գործընթացին քաղաքացիական հասարակության հաստատությունների մասնակցության խթանմանը:

Անկախության տարիներին երկրում ձևավորվել է որոշակիորեն բազմազանեցված շուկայական տնտեսություն, ստեղծվել են դրան բնորոշ բազմաթիվ կառույցներ, ձևավորվել է բավականին ազատական օրենսդրական դաշտ, ներդրվել է արտաքին առևտրի ազատական ռեժիմ: Մակրոտնտեսական ցուցանիշները վկայում են, որ վերջին տասնամյակում արձանագրվել են տնտեսական աճի բավականին բարձր տեմպեր, ցածր սղաճ, պետական բյուջեի պակասորդի կրճատում, արտաքին տնտեսական հարաբերությունների և արտաքին առևտրի աշխուժացում, ընդհանուր օտարերկրյա ներդրումների աճ: Այս ամենի արդյունքում ստեղծվել են երկրի հետագա զարգացման և բնակչության կենսամակարդակի զգալի բարձրացման որոշակի նախադրյալներ: Սակայն միջազգային փորձը վկայում է, որ ՀՆԱ-ի աճը և ցածր սղաճը ոչ միշտ են բնակչության բարեկեցության և տնտեսության զարգացման բնութագրիչներ, իսկ

մակրոտնտեսական կայունությունը և զարգացումը բնութագրվում են մաև որոշակի որակական չափանիշներով (վերարտադրողականություն, մրցունակություն, սոցիալական առաջընթաց և այլն), որոնք արտացոլում են տնտեսության իրական վիճակը: Այս ընկալումը հիմք ընդունելու դեպքում մտահոգության տեղիք են տալիս բնակչության կյանքի որակի բնութագրերը, աղքատության, գործազրկության և արտագաղթի ցուցանիշները, ներմուծման աճի տեմպի նկատմամբ արտահանման աճի տեմպի շարունակական անկումը, բյուջետային եկամուտների և ՀՆԱ-ի հարաբերակցության նվազումը: Ակնհայտ է, որ տնտեսական աճի ներկա տեմպերի հնարավորինս պահպանումը երկարաժամկետ հեռանկարում չի կարող բավարար լինել մի շարք ցանկալի միտումների ձևավորման (աղքատության կրճատում, կենսամակարդակի բարձրացում, աշխատանքի վարձատրության ծավալների աճ, զբաղվածության խթանում և այլն) առումով, եթե չապահովվեն որակական տեղաշարժեր:

Ներկայումս հասունացել է տնտեսության հեռանկարային զարգացման կայուն հիմքերի ապահովման, կամ այլ խոսքով, տնտեսական աճը զարգացման փոխակերպելու հրամայականը: Կյանքի որակի համընդհանուր բարելավումը կարող է իրականություն դառնալ տնտեսության այնպիսի առաջընթացի արդյունքում, որը հիմնված է անհատի մտավոր և ստեղծագործական ունակությունների արդյունավետ օգտագործման և բնական ռեսուրսների ռազմավարական նշանակության նվազեցման վրա, ինչպես մաև ենթադրում է մարդու տարատեսակ պահանջ-մուրքների բավարարման հնարավորությունների ընդլայնում, ներկա և հետագա սերունդների արժանավայել կյանքի երկարաժամկետ երաշխիքների ապահովում, բնապահպանական, տնտեսական և սոցիալական գերակայությունների հավասարակշռում և ներդաշնակեցում: Այս առումով սոցիալ-տնտեսական զարգացումը և շրջակա միջավայրի բարելավումը համարվում են ոչ թե նպատակ, այլ միջոց՝ մարդու և հասարակության կենսունակ զարգացման բնականոն ընթացքն ապահովելու համար¹:

ՀՀ տնտեսական անվտանգության ապահովման կարևորագույն գործոններ են տնտեսության միջազգային ինտեգրման գործընթացներին մասնակցության խորացումը համաշխարհային և տարածաշրջանային մակարդակներում, օտարերկրյա պետությունների, միջազգային տնտեսական և ֆինանսական կառույցների հետ համագործակցության ընդլայնումը, արտահանման խթանումը, համաշխարհային շուկայում մրցակցության ուժգնացման պայմաններում հայրենական արտադրողների շահերի պաշտպանությունը և նրանց արտադրանքի իրացման շուկաների ընդլայնումը, տարածքային ու ճյուղային սոցիալ-տնտեսական համաչափ զարգացումը, գիտատար ճյուղերի խրախուսումը, երկրի արտաքին պարտավորությունների կրճատումը:

Ընդհանուր ձևակերպմամբ ՀՀ ազգային անվտանգության արդիական ներքին սպառնալիքների դաշտն ընդգրկում է պետական կառավարման և դատաիրավական համակարգերի գործունեության թերությունները, դրանց նկատմամբ բնակչության անվստահությունը, ժողովրդավարական ավանդույթների արմատավորման, քաղաքական կուսակցությունների կայացման և ներկուսակցական ժողովրդավարացման ոչ բավարար մակարդակները, հասարակության բևեռացումն ու ուրբանիզացումը, շուկայական տնտեսության կայացման մարտահրավերները, ենթակառուցվածքների ցանցի ոչ բավարար մակարդակը, գիտակրթական համակարգի ցածր արդյունավետությունը, ժողովրդագրական բացասական միտումները, բնապահպանական խնդիրները, բնական պաշարների անարդյունավետ կառավարումը, համաճարակները և աղետները²:

¹ «ՀՀ կայուն տնտեսական զարգացման ռազմավարություն», մախագիծ, Երևան, 2007 (www.minted.am):

² «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն», Երևան, 2007: